



Լևոն Շանթ

Երագ օրեր

5

Յուլիս 30

Թէեւ մեր պարապմունքին ժամերը իրենց սովորական ընթացքով կսահին ըստ երեւոյթին, թէեւ մեր յարաբերութիւնը իր սովորական հոսանքով կշարունակուի կարծես, սակայն իրապէս փոխուած է շատ բան:

Երկուքս ալ կզգանք, որ կձգտինք իրարու, երկուքս ալ գիտենք փոխադարձաբար, որ ջերմ կապուած ենք իրարու: Բայց միայն գիտենք. ո՛չ իսկ բառ մը մեր գիտցածը արտայայտելու համար:

Աղջիկը երեւի կապասէ, որ ես ծայրը բանամ: Իսկ ես՝ առաջ կկարծէի, թէ հպարտութիւնն է լեզուս կապողը. կամացկանաց կընթոնեմ, որ միայն աստով իմ բռնած դիրքս չի բացատրուիր: Գուցէ խորքին մէջ իր զգացումներուն վրայ դեռ բացարձակ վստահ չեմ. կամ կզգուշանամ գուցէ ծիծաղելի քայլ մը առնելէ. կարելի է պարզապէս առաջին խոստովանութեան դժուարութիւնն է ասիկա:

Այս բոլորէն դուրս լուծեանս մէջ կարծես տարօրինակ վախ մըն ալ կայ. անորոշ եւ տարտամ վախ մը թանկագին բանէ մը զրկուելու, անփոխարինելի բան մը կորսնցնելու: Բիրեղէ նուրբ ու թանկարժէք գեղարուեստական անօթի մը դպչելու երկիւղը, որ մի՛ գուցէ կոտրուի:

Եւ վերջապէս, իրաւ է, այս ապրումներուն մէջ դեռ շատ են երեխայ: Այսօրուան դէպքը որքան ծիծաղելի, այնքան ալ բնորոշ է:

ԻԲիկուան դէմ մեր երկու ընտանիքները բոլորս միասին իջած էինք գետի ափը բանջարանոցները:

Հաշալի իրիկուն մը: Բա՛ց, սրտի լայնացում տուող երկինք մը. ժպտո՛ւն, ամենուս դէմքին ժպիտ նուիրող վերջալոյս մը վարդէ ամպերու ցիրկցան դեգերուն մէջէն:

Ուրախ էինք ամենքս, բայց Վարդուհիի խայտուն բերկրանքին չափ չկար: Ըսենք՝ ամենքս ալ կպոռայինք, կվազէինք, իրարու ձեռքէ պտուղ կխլէինք. ձայներնիս ու ծիծաղնիս լեցուցեր էր ձորը:

Մութ էր արդէն, երբ դէպի տուն ճամփայ ինկանք: Ես ու Վարդուհին ետ մնացինք ամենքէն, կարծես թէ պատահմամբ եղաւ:

Հագիւ քանի մը քայլ ըրեր էինք միասին ձորն ի վեր, երբ Վարդուհին խոր շունչ մը առաւ ու կեցաւ.

- Ա՛, ինչպէ՛ս հոգնեցայ:

- Շատ վազեցինք. հանգիստ ելէ՛ք. և խորհուրդ տուի ես իմաստուն կերպով:

Լռեց. մէյ մըն ալ հանկարծ նորէն կանգ առաւ շիփնշիտակ դէմս ու աչքերուս խորքը նայելով ըսաւ կտրուկ.

- Գիտէ՞ք, պարոն Երուանդ. դուք կին էակէ մը բնաւ պիտի չսիրուիք:

- Մի՞թէ. և բացականչեցի ես ապշահար այս անակնկալ յայտնութեան դէմ. և եւ ինչո՞ւ այդպէս կենթադրէք:

- Մասնաւոր ենթադրութեան կարիք չկայ. որովհետեւ կնոջ մը հաճոյանալու ամենեւին փոյթ չունիք: Այսքան ատեն է միասին ենք. պարզ հաճոյախօսութիւն մը, տարրական հաճոյակատարութիւն մը չեն տեսած ձեզմէ. անգամ մը թելերնիդ չառաջարկեցիք ինձի, թէեւ քանի մը անգամ յայտնած են դիտմամբ

հոգնած ըլլալս:

- Ներող եղէք. կրնդունիմ անքաղաքավարութիւնս. հանցանքը միամտութեանս է. չեմ հասկացած, որ ձեր «հոգնած եմ» ըսելը, «թեւերնիդ տուէք» ըսել է:

- Նախ ես ատիկա յիշեցի օրինակի համար. բայց արդէն ինքնին այդ շհասկնալնիդ նշան է, թէ ինչ աստիճան անփոյթ էք կնոջ հանդէպ:

- Եւ հետեւաբար կկարծէք, թէ սիրոյ մէջ երբեք յաջողութիւն պիտի չունենամ. և ըսի ես տխուր շեշտով մը:

- Եթէ չփոխուիք. և ատելցուց ժպտուն:

- Եթէ ա՛յդ է պայմանը՝ պէտք է որ փոխուիմ, նոյնիսկ այս վայրկեանէս: Օրիորդ, կհաճի՞ք թեւս ընդունիլ. և ըսի իր առջեւը խորունկ խոնարհութիւն մը ընելով:

- Անշո՛ւշտ. սիրո՛վ. և ըսաւ բարձր խնդութով եւ մինչեւ արմունկը մեր դաստակը կամաց մը թեւս անցուց

- Բարակ շապիկ մը միայն մեր բագուկները իրարմէ կգատէր. խելագարի պէս սեղմել կուզէի կրծքիս ինծի հանձնուած այդ թելը ու մեծ ճիգով կգսպէի թեւս, որ սկսաւ դողալ:

Եւ ան զգաց իհարկէ թելիս դողը եւ իր խօսքն ու ծիծաղը անմիջապէս կտրեցաւ:

Լուռ քանի մը քայլ ըրինք: Աղջիկը մեղմ ու զգուշութեամբ ետ քաշեց ձեռքը թելէս ու ըսաւ.

- Ձեզի նեղել չեմ ուզեր. մնացէք հաւատարիմ ձեր բնատրութեան. դուք նման չէք ուրիշներուն:

- Անշուշտ կգերադասէիք, որ նման ըլլայի ուրիշներուն:

- Շատ կսխալիք, եթէ այդպէս կկարծէք. և եղաւ իր կտրուկ պատասխանը, որ ինծի անշափ դուր եկաւ:

Քայլերնիս արագացուցինք, հասանք ու միացանք խումբին:

Օգոստոս 6

Մեր ընթերցանութեան ժամերը այլևս դադրած են լուրջ աշխատանք ըլլալէ: Իսկապէս գիրքը չէ հիմա մեզի իրար բերողը, այլ ներքին բուռն պահանջ մը իրարու հետ ըլլալու, իրարու քով ըլլալու: Ատիկա իսկ այլևս հերիք չի գար. մեր ձեռքերը ծարաւ ունին իրար դպած ըլլալու, իրար բռնելու բազմատեսակ պատրուակներով խօսակցութեան ընթացքին:

Նախորդ օրը սեղանին վրայէն վար ձգեց իր հովհարը, կարծեմ պատահմամբ եղաւ. ցոեցա, որ վերցնեմ. ինքն ալ ծոեցաւ եւ մեր գլուխները եկան իրարու. հարու տուող երկու այծերու կնմանէինք. Իր մազերը թափեր էին ճակտիս, քունքերուս ու երեսներուս վրայ, ուր կգալարէին. ու հարբած էի ես անոնց անուշ բոյրէն. գլուխս դժուարով բարձրացուցի:

Երեկ իրիրոկն ալ մօրը հետ երեքով քիչ մը քալելու ելանք իրենց տան առջելը: Կխօսակցէինք շատ կարգին. խօսքի միջոցին բան մը նշելու համար հանեցի ծոցիս փոքրիկ տետրակը. խլեց ձեռքէս ու փախաւ՝ սպառնալով բոլոր մէջինը կարդալ: Ինկայ ետեւէն. քանի՛ անգամ բռնեցի, քանի՛ անգամ ազատուեցաւ ու փախաւ: Մայրը կխնդար ու կհանդիմանէր իր աղջիկը, թէ ամօթ է, երեխայ չէ այլևս, ահագին աղջիկ է: Իսկ իմ իրտս ուրախութենէ կթփրտար, երբ իր մարմնին ու կրծքին հպումը կգգայի կրծքիս ու թեւերուս վրայ:

Այսօր ալ երբ իրենց սանդուղներէն բարձրացայ՝ դէմս վազեց խնդալով, թէ «մեր դասարանը ջրհեղեղի տակ է». գիշերը տան տէրը եկած եւ առատօրէն ջրած էր ամբողջ պարտէզը:

- Եկէ՛ք պատշգամ. հոն ալ պարտէզի պէս է եւ առանձի՛ն. և աւելցուց իսկոյն խորհրդաւոր ժպիտով մը:

Եւ իր սովորական հանկարծ շարժումովը թեթեւ մը քաշեց թելէս, հանեց պատշգամ, առաջնորդեց դէպի մեծ բազկաթոռը եւ ինքն ալ նետուեցաւ դէմ սօրրան աթոռին. սկսաւ խօսիլ ու ճոճուիլ, իբրեւ նախաբան մեր աշխատանքին:

Պատշգամբ, շիտակ է, պարտեզի պէս էր. երկու խոշոր կաղնի իրենց ծերացած ճիւղերը կտարածէին անոր վրայ. իսկ պատշգամին երեք եզերքները շարուած էին մեծ ու փոքր թաղաքներու մէջ ամէն տեսակի ծաղիկներ, որոնցմէ գինովցնող հոտ մը կ'ծաւալէր արեւի հետզհետէ զօրացող շոյանքին տակ:

Վարդուհին կարդալ սկսաւ, բայց պարզ էր, որ մտքերուն չէր հետեւիր. ես ալ չէի հետեւիր: Բացի մեր սովորական ներքին խանգարումէն, օդն ալ շատ ծանր էր այսօր. օգոստոսի բացառիկ տաք օրերէն մէկը:

- Չէ՛, ալ չեմ կրնար. և ընդհատեց հանկարծ ու գիրքը ձգեց ծունկներուն:

- Ընդհատեցէ՛ք. և ըսի. և կխօսինք:

Գիրքը իսկոյն նետեց քովի աթոռին վրայ: Գլուխը ետ ձգեց, աչքերը գոցեց եւ սկսաւ ճոճուիլ: Մազերը երկու կողմէն առաջ սահեցան ու ծփուն շրջանակի մը մէջ առին իր սիրելի դէմքը: Ես հափշտակուած կդիտէի, երբ հանկարծ աչքերը բացաւ ու գամեց իմ աչքերուս:

Ի՞նչ կար նայուածքիս մէջ՝ չգիտեմ, բայց տեսայ, որ հանկարծ սաստիկ կարմրեցաւ ու վեր թռաւ իր օրորուն աթոռէն: Կեցաւ դէմս ու խենթխենթ բաներ մը ըսինք իրարու. գնաց պատշգամին եզերքը, ծաղիկ մը փրցուց ու սկսաւ ջղաձգօրէն փեթրտել:

- Տեսէ՛ք, ի՞նչ անուշ կհոտի. և բացականչեց, եկաւ նորէն ինծի եւ իր ճնրթած մեխակին թերթիկները ափով սեղմեց դէմքիս: Շրթունքներս եկան իր մատներուն:

- Հատ մը մեխակ կուզէ՞ք. և հարցուց հարբած ժպիտով մը:

- Այո: Քաղուա՛ծ ձեր այս մատներովը:

Թաղարներուն վրայ քիչ մը փնտրեց. կրնարէր: Փրցուց ու նետուեցաւ դէպի ինծի. ձեռքս մեկնեցի, որ առնեմ:

- Ոչ. և ըսաւ. և ե՛ս պիտի ձեր կուրծքը անցընեմ:

- Խնդրե՛մ:

Մէկ շարժումով մը նստեցաւ իմ բազկաթոռիս բազուկին վրայ, ծոնցաւ վրաս ու ծաղիկը տարաւ օձիքիս օղակին. օղակի կարուած էր, սկսաւ աշխատիլ կերպ մը ծաղիկը անցրնելու. եւ այդ ճիգերուն մէջ այնքան մօտ եկաւ, որ իր կուրծքը հարեցաւ վզիս ու դէմքիս: Կզգայի իր շնչելը արագ ու անկանոն: Իսկ իմ շունչիս օդը հանկարծ կարծես պակսեցաւ: Եւ որպէսզի հանկարծ իր մէջքը չի գրկեմ՝ երկու ձեռքով ամուրբ ոնեցի իր երկու թեւերը ուսերուն մօտիկ ու կամաց մը ելայ ոտքի: Եւ սրի.

- Անչափ, անչափ շնորհակալ եմ ձեր այս սրտագին նուէրին համար: Եւ կարծեմ այս տաք ու խեղդող օդին տակ այլեւս ոչինչ ընն չենք կրնար. լաւ է երթամ տուն:

- Երթա՞լ կուզէիս. և բացականչեց աղջիկը մեծ գարմանքով:

- Կարծեմ աս է շիտակը. բայց հետս կտանին բախտիս ծաղիկը. և ըսի խնդալով. թեթեւ մը շոյեցի կրծքիս կարմրատուն մեխակը ու ձեռքս մեկնեցի հրաժեշտի:

Վարդուռին ապշած ու վարանքով, գրեթէ մեքենաբար ձեռքը տուաւ ինձի, որ ես ամուր սեղմեցի եւ արագ վագեցի սանդուղներէն վար:

Շիտակ տուն, շիտակ սենեակս եւ նետուեցայ անկողնիս վրայ քիթ ու բերնիս:

«Ինչո՞ւ ձգեցի. ինչո՞ւ եկայ. ինչո՞ւ չգրկեցի. ինչո՞ւ վշտացուցի աղջիկը». կկրկնէի անդադար մտքիս մէջ:

Սա ի՞նչ հիմար ու անիմաստ բան էր ըրածս, ե՛ր կոպիտս, ե՛ր անբնական: Չիմա ի՞նչ պիտի մտածէ, ի՞նչ պիտի զգայ խեղճ աղջիկը:

Չոզեկան խառնաշփոթ ու խիստ անախորժ վիճակի մէջ կդառնային մտքերս, ինքս ինձի չհասկնալով, ինքս ինձի հետ անհաշտ, երբ ինձի այնպէս թուեցաւ, թէ սենեակիս դուռը կգարնեն:

Չազի գլուխս դժգոհութեամբ բարձրացուցած էի բարձէս, որ դուռը բացուեցաւ ու սեմին վրայ տնկուեցաւ Միքէն:

- Խեր ըլլայ, ի՞նչ է պատահեր. և հարցուց զարմանքով եւ երկար եւս ուշադիր դէմքս դիտելով: և Չիսուհի՞ս. շրլլա՛յ թէ աղջիկդ ճամփու դրաւ քեզի: Եթէ բոլոր սիրահարուածներու դէմքը այդ տեսակ է, լաւ է՝ կեանքիս մէջ բնաւ չսիրահարիմ:

Ջգացի, որ ճշմարտութիւնը գուշակելու շատ մօտերը կպտտկի: Եւ նեղ վայրկեաններուն յատուկ ճարպիկութեամբ մը իսկոյն դերս փոխեցի:

Աշխոյժ վեր ցատկեցի, նստեցայ անկողնիս եզերքին ու ըսի.

- Սիրահարիլը սքանչելի բան է եղեր, Միքէ. երդում կընեմ, որ սիրահարիմ պիտի. եւ քեզի ալ նոյնը կհանձնարարեմ:

- Ի՞նչ ըսել է «պիտի». միայն «պիտի»նի մը համար կարելի՞ է այդ աստիճան ապուշ դէմք մը առնել:

- Ապուշդ քեզի՛ պահէ ու ականջ դի՛ր: Շիտակը ինձի համար ալ տարօրինակ բան մըն էր հետս պատահածը: Քիչ մը առաջ այս խեղդող տաքէն նեղուած՝ պատկեր էի ու խենթիխելոք կմտապէի. հակնարժ միտքս ինկաւ քու անցեալ օրուան պատմական երեւակայութիւնը. իյիշե՞ս անտառին մէջ որ ըսիր:

- Աղե՛կ. ե՞տքը:

- Ետքը միտքս սկսաւ այդ պատմութիւնը շարունակել. կամացկամաց ոգետրուեցայ՝ դարձաւ կատարեալ վէպ. իբրեւ թէ եւս Միւնեաց Սեպուիս Գուգարաց օրիորդի նշանածն եմ, եւ քեզի հետ նշանածիս այց կերթամ Բդեշխին ամառանոցը:

- Է՛նէ՛. և երկարեց Միքէն իր ձայնը:

- Սկսայ երեւակայել ինչպէս մեզի կդիմատրեն եւ ինչպէս վերջը կտեսակցինք Միւնեաց օրիորդին հետ: Մնացինք մինակ ես ու ինքը: Թաղարներով, ծաղիկներով շրջապատուած տեղ մըն էր. պատշգամի նման բան մը: Օրիորդը ինձի համար թաշկինակի պէս բան մըն էր ասեղնագործած, որ ինքը իր ձեռքով ուզեց վիզս անցընէ. այնքան մօտեցաւ, որ կլսէի սրտին զարկերը իմինիս մօտիկ:

- Է՛կե՛. և ըրաւ Միքէն նորէն ե՛ւ հեգնտ, ե՛ւ ծիծաղով:

- Ալ ի՞նչ «Է՛կե՛». թեւերս բարձրացուցի, որ իր անձնատուր կուրծքը բազուկներուս մէջ շղթայեմ, դուռը գարկին. դո՛ւն էիր:

- Վա՛յ, շունդաշնորդի՛, ի՞նչ գէշ տեղն եմ հասեր: Հիմա կհասկնամ՝ թէ ինչու այնպէս չարացած երեսս կնայէիր: Կուգես՝ ես երթամ ու դուն նորէն շարունակէ. միայն գիտցիր՝ ինչէ որ պիտի գրկուիս: Եղբայրս պատուական գինի է ճարեր, մայրիկս ալ այսօր եփեր է քիֆթէ. իրիկուան դէմ ալ ձիերով աղուոր պտոյտ մը: Ընտրէ. երագական Սիւնեաց օրիորդի համբո՞յրը կուգես, թէ ընտիր գինի, փատաւոր քիֆթէ եւ աշխոյժ ձի մը:

- Ընտրութիւնը դժուար է, բայց□ն ըսի ես գլխարկս առնելով:

- Հա՛, կտեսնեմ, դեռ բոլորովին չես հիմարացեր: Մա՛րջ:

Խենթ օր մը անցուցի: Հոգեկան մշտական ծփում մը ներսը ծածուկ, բախտաւոր ու շոյող. կեղծելու անհրաժեշտութիւն. ուրախ ու անփոյթ երեւնալու ճիգեր: գիտի, հարկինք, խօսք ու կատակ. եւ միեւնոյն ժամանակ խորքէն դժգոհութիւն մը ինքս ինծի դմէ:

Հոգեկան այս երկութիւնը վերջ գտաւ միայն իրիկուան դէմ, երբ Միքէի հետ հեծանք ձիերը եւ ձիերը չափ առին:

Ջարմանալի կերպով հանկարծ զգացում ը մէջս խուժեց, հպարտ ինքնագիտակցութիւն մը. եւ իսկոյն ինկաւ ինքս իմ վարմունքիս դէմ ունեցած անհաշտ տրամարդութիւնս: Ջգացի՝ որ ուրաշ էի Վարդուհիի համբոյրին ու ձգողութեանը դեռ դիմադրել կարողանալուս համար. եւ ընթոնեցի, որ այգդ բոլորը իմաստ ունէր. կուգէի, որ տեւեր իմ այս հոգեկան վիճակս. տեւէր ու աճէր զգացումներուս այս խայտանքը: Ամէն դիմադրութիւն, ամէն սանձում կբազմապատկէր մեր մէջ եղած լարումը: Եւ եզրակացուցի, որ ճիշտ ատոր համար էր անշուշտ, որ երկուքս ալ կլռէինք անլռելին ու կգսպէինք անգսպելին:

Բայց եւ կհասկնայի, որ հասած էինք հնարաւոր սահմանը. այսօրուան փորձը կըսէր ինծի, որ իր քովը եւ իրեն հետ առանձին այլեւս անկարելի էր

աչքակապուկ խաղալը. մեր յուզումը կյորդէր. եւ ի՛ր, եւ ի՛ն:

Ես որ ձիս խթանած էի ու ինկեր էի առաջ, հանկարծ սանձերը քաշեցի եւ թողի, որ Միքէն հաւասարի ինձի: Հագիւ էին մեր ձիերը իրարու գոյգ եկեր, որ դարձայ ընկերոջս եւ առաջարկեցի՝ յաջորդ օրը առտուն կանուխ երթանք որսի շրջակայ անտառները՝ ինչպէս արդէն քանի մը անգամ խօսած ու ծրագրած էինք իրեն հետ, բայց հետաձգած էինք միշտ ու չէինք իրագործած:

Միքէն իկսոյն համաձայնեցաւ, քիչ մը մտածեց եւ հարցը վրաւ ատելի լուրջ հողի վրայ: Երկու ժամուայ չափ Դելիշանէն հեռու Աղստաֆայի ճամփուն վրայ շատ փոքր գիւղի մը մէջ կապրէր իր մօրքուրը. վաղը կերթանք ու գիշերը կմնանք հոն. մօրքուրին երեք տղաքը, մանաւանդ միջնակը, յայտնի որսորդ է եղած: Յաջորդ օրը անոնց հետ միասին կելլենք որսի եւ իրիկունը կվերադառնանք տուն:

Այս ծրագրի մանրամասնութիւնները մշակելով ձիերուն գլուխները դարձուցինք դէպի Դելիշան հանգիստ քալուածքով մը:

Եւ հիմա այս տողերը, որ կգրեմ՝ մինակ ու սենեակին լամպին տակ՝ կարծես թէ ըրածիս քիչ մը գոջացած եմ: Երկու օր ամբողջ Վարդուհին չտեսնելը չափազանց դժուար է արդեն. այլեւ կմեղքանամ Վարդուհիս. այսօրուան իմ նշանաւոր փախուստէս ետքը՝ խեղճը հիմա ի՞նչ պիտի գգայ եւ ի՞նչ պիտի մտածէ:

Բայց այլեւս ետ քաշուիլ չեմ կրնար եւ չեմ ուզեր. հոսանքը կքշէ ինձի. թո՛ղ քշէ: Միայն որոշեցի, որ առտուն երկու սրտանց տող կգրեմ իրեն ու ներողութիւն կխնդրեմ, թէ հրաւիրուած եմ որսի:

Օգոստոս 10

Նոր վերադարձայ տուն եւ ուշ գիշերով: Հօրեղբօրս կինը սկսած էր անհանգստանալ. ինձի կսպասէր երեկ իրիկուն, ինչպէս Միքէի հետ մեր դիտաւորութիւնն էր: Բայց Միքէի մօրքուրն ու տղաքը լսել անգամ չուզեցին ու պահեցին օր մըն ալ:

Աղուոր ալ քոյր մը ունին: Ամէն անգամ, որ աղջկան խորունկ աչքերուն կնայէի՝ սիրտս կսեղմուէր. անոր աչքերուն մէջ Վարդուհիիս հոգին կկարդայի, որուն կարօտը կայրէ հոգիս:

Այսօր երեք օր է չեմ տեսած Վարդուհին. եւ արդեն գինովի պէս բան մըն էի այս երեք օրը. ֆիզիկական հոգնութեան մէջ խեղդել կշանայի զգացումներս եւ խօսք ու աղմուկի եւ նոր տպաւորութիւններու տակ մոռացում կփնտրէի:

Երեկ առտու եւ այս առտու հրացաններն առած ինկանք անտառին խորքը. միջնակ տղան իրաւ որ բաւական թիվով թռչուն զարկաւ ե՛ւ իր, ե՛ւ մեր փոխարէն. զարմանալի նշան առնել գիտէ, իսկ ես իսկապէս նշան առնելու վարժութիւններ կրնէի, քան որս: Այս որս ըսուածին մէջ ինձի հետաքրքրողը խելագար վազվզութիւն է անտառին մէջ, իբրեւ թէ մեծ բանի վրայ ես: Մարդ չի նայիր ժայռ, փոս, ջուր, ծառ, չորցած ջիւղերը ձեռքերդ կճանկոտեն, մատացներուն փուշը ծոծրակդ կճանկէ, երբ արագ տակովն անցնիլ կփորձես. ոտքդ տապալուած ծառերու կուգայ եւ ջրերու մէջ կճողփես շտապումիդ աստեն: Բայց ո՞վ է ուշադրութիւն ընողը: Այդ միշտ անհանգիստ բանի մը որոնումն է հետաքրքիրը. թէ չէ ինքնինի շատ անսիրտ ու վայրենի բան մըն է բոլորովին աւելորդ տեղը խեղճ կենդանիները սպաննելը: Երբեմն մէջերնին այնքա՛ն գեղեցիկները կան եւ այնքա՛ն մարդկային նայուածք ունին, երբ ինկած են վիրաւոր ու մահամերձ:

Ընկերներու ծաղրին չենթարկուելու համար այս բոլորը իհարկէ ոչ ոքի չէի ըսեր: Արդեն առանց ասոր ալ բաւական ենթակայ էի իրենց կատակներուն, քանի որ ոչինչ չէի զարկած երկու օտրուան ընթացքին: Եթէ ըսէի, որ զարնել ալ արդեն չէի ուզեր՝ վրաս բոլորովին պտի խնդային:

Շատ աւելի խոր հաճոյք կպատճառէր ինձի, երբ իրիկունները արեւին թերուելէն ետքը չորսով կելլէինք ձիարշափ. մեծ եղբայրը գալ չէր կրնար: Ձիու սերկ կզգամ, որ ունի. եւ հիմա կհիստի մէջս կնոջ սիրոյ հետ:

Երբ ձին կալանայ, երբ հովը ականջիս տակ դիւցագնական խօսքեր կսուլէ, հագուստներս կուտեցնէ եւ ձիուն բաշը օդին կուտայ, երբ ես ձիու մէջքին փակած, հակած դէպի գլուխը, մրրիկի պէս կխոյանամ, անսովոր ու դժուար արտայայտելի խտիտ մը կզգամ մէջս թէ՛ մարմնական, թէ՛ հոգեկան. ու

կարթննան մէջս լեռնցի մարդու բնագոյներ. ինծի այնպէս կթօի, թէ Վարդուհին է գիրկս, որ կրծքիս սեղմած հեռու, հեռու կփախցնեն:

- Տղա՛, քիչ կամաց. և կպոռայ Միքէն ետեւէս:

Իսկ այսօր քանի կմօտենայինք Դելիշանին, այնքան անհամբերութիւնը կաճէր հոգիիս մէջ. թէն մեր ձիերը շատ հանգիստ կքալէին: Նախ փոքրիկ յոյս մը ունէի, որ հասնելուս պէս կրնայի վայրկեան մը Շամիրեաններուն հանդիպիլ ու Վարդուհին տեսնել: Բայց շատ ուշ հասանք: Միքէն գատուելէս ետքը, երբ տուն կուղղուէի, ժամը տասը անցած էր արդեն: Եւ Վարդուհինց ամառանոցը մթութեան ու ծառերուն մէջ քուն մտած ստուեր մըն էր միայն:

Երբ քովն կանցնէի ծանր քայլերով՝ հոգիս կզգար, թէ ինչքան մօտիկ եմ իրեն. ան կարելի է քունի մէջ էր արդեն, գուցէ երագներու մէջ, գուցէ արթուն էր ու ինծի կերագէր, գուցէ ան ալ կզգար մօտիկութիւնս:

Գիշեր բարի, աղջի՛կս. ես ալ գրիչս վար դնեմ, ելլեմ ու պառկիմ:

Օգոստոս 11

Առտուն արթնցա շատ կանուխ: ու չգիտէի ի՞նչ ընեմ, որ ժամանակ անցնի. ժամացոյցիս սլաքն ալ կարծես դիտմամբ տեղէն չէր երերար:

Շուշուշուտ ծառերու կանանչութեան մէջէն երեւցող Վարդուհինց տան կարմիր կտուրին կնայէի, կարծես անկէ կուզէի ճմլող կարօտս առնեմ:

Հագիւ ժամացոյցիս սլաքը իննին մօտենալու վրայ էր, որ ալ չհամբերեցի. քիչ մը շտկեցի վրաս ու նետուեցայ Շամիրեաններուն կողմը. բայց երբ տանը մօտեցայ, դիտմամբ սկսայ աւելի ծանր քալել, որ շատ շտապելիս աչքի չիյնայ:

Պատշգամը մարդ չկար, մտայ սրահը՝ նորէն մարդ չկար. խոհանոցի կողմը կարծես շարժում կար:

- ո՞վ է. և ձայն տուաւ տիկինը գոգնոց մը մէջքը կապած եւ երկար շերեփ մը ձեռքը խոհանոցէն դուրս գալով:

- Բարե՛ւ ձեզի, տիկի՛ն. աս ո՞ւր են. ձեզի մինա՞կ են թողեր, ի՞նչ է:

- Այո՛, բոլորովին մինակ: Երիտասարդները փիքնիկ կազմակերպեցին, քանի մը ընտանիք միասին: Այդքան հեռուները ես չեմ ուզեր. քալելը դժուար է: Եւ վերջապէս պիտի պտտին, պիտի խաղան, պիտի պարեն. թող անոնք զվարճանան: Ա՛յ, ես ալ մտածեցի մորիի անուշ եփեմ: աս ալ իմ փիքնիկը. և եզրակացուց դառն կատակով մը: և Հրամանեցէ՛ք ներս. և աւելցուց իբրեւ քաղաքաւարութիւն:

- Ո՛չ, շնորհակալ եմ. ինչո՞ւ խանգարեմ ձեզի. առայժմ ցտեսութիւն:

Դարձայ ու ծանրեծանր սկսայ իջնել սանդուղներէն. գարմանալի զգացում մը կար մէջս. կարծես տիկինը իր անուշոտ դերեփը գարկած ըլլար քիթ ու բերնիս: Իմ եռացող անհամբերութիւնս եւ ճմլող քնքուշ կարօտս զարնուեր էին բոլորովին անակնկալ կերպով կոշտ ու անախորժ բանի մը:

«Պիտի խաղան, պիտի պտտին, պտի պարեն»։ Այո՛, Վարդուհին հիմա ուրիշներու հետ էր. կխաղար, կպտտէր ու կպարէր երիտասարդներու հետ. հիմա ան կպարէր ուրիշներու թելերուն մէջ: Վարդուհին խօսքի մէջ ըսած էր ինծի արդն, որ պարելը շատ կսիրէ, ինչպէս եւ աղմուկեկազվզուքը եւ սալոնական խաղերը:

Հապա ի՞նչ: Որովհետեւ կսիրէ ինծի՝ փոխէ՞ պիտի իր բնատրութիւնը, իր գուարճութիւնները. որովհետեւ կսիրէ ինծի՝ ալ ուրիշներու հետ պիտի չըլլա՞:

Ասոնք բոլորը հիմար մտածումներ են իհարկէ: Ճշմարտութիւնն ան է, որ այս չարաբաստիկ փիքնիկը շատ ձախորդ օր պատահեցաւ: Եւ հիմա ի՞նչ ընեմ ես մինչեւ վաղը:

Որոշեցի նստիմ ու նամակներս գրեմ. հինգ վեց նամակներ ունէի պատասխանելիք, որ օր օրի կհետաձգէի՝ թէ՛ մեր տունը, թէ՛ դուրսը ընկերներու, թէ՛ ճեմարան:

Նամակները բռնեցին ամբողջ օրս ճաշէն առաջ ու ճաշէն ետքը: Իրիկուան դէմ տարի նամակներս գիղ ու փոստեցի եւ ընկէ ալ հանդիպեցայ Միքէին:

Միքէի հետ տուն կվերադարնայի. գիղի հրապարակն էինք, որ հանկարծ դիմացի փողոցէն նշմարեցի հեռուն Վարդուհին իր եղօրքը քրոջը եւ ուրիշ երկու երիտասարդներու եհտ. հաւանօրէն նշանատր փիքնիկէն կվերադառնային:

Միրոս սկսաւ մուրճի պէս գարնել: Երբ բաւական իրար մօտեցանք՝ Կատեան հեռուէն վազեց ուղղակի դէպի ինձի, թեւերուս մէջ առի ու համբուրեցի քնքշանքով:

Հրապարակին ճիշդ մէջտեղը քոյր ու եղբայր գատուեցան իրենց ընկերներէն եւ ուղղուեցան դէպի մեզի, քանի որ կեցած էինք իրենց բռնելիք ճամփուն վրայ:

- Աս ո՞ր ըէք. մղջտեղ չկաք. և բացականչեց պարոն նկարիչը կէսնկատակ, կէսնլուջր, բարես առնելով. և այս տեսակ դրացնութի՞ն կըլլայ:

- Անիրա՛ւ ես. դուն ինքդ շա՞տ պարտաճանաչ դրացի մըն ես, որ ուրիշները կմեղադրես. և պատասխանեց Վարդուհին եղբօրը, միեւնոյն ժամանակ շատ քաղաքավարի ձեռք տալով ինձի եւ Միքէին:

- Իմ բանս ուրիշ է, քոյրի՛կ. առտու իրիկուն գբաղուած մարդ եմ. և եղաւ եղբօր հեզնոտ պատասխանը:

- Ատիկա միակողմանի դատողութիւն է: ամէն մարդ ալ իր գործերն ու գբաղումներն ունի: Պարոն Երուանդը այնքան ժամանակ է հատկացուցեր մեզի մինչեւ հիմա, որ մենք պարտական ենք շնորհակալ ըլլալու: Անիրաւ խօսք լսել չեմ կրնար:

Եւ այս բոլորը ըսուած էր ինձի համար բոլորովին օտար շեշտով մը եւ շատ քաղաքավարի. եւ ընդհանրապէս իր շարժումներն ու նայուածքն ալ շատ հանգիստ ու առօրեայ:

«Լեւեր են». մտածեցի ես:

- Գոնէ՛, պատմեցէ՛ք նայինք. մենք ալ մասնակից ըլլանք ձեր այդ գբաղումներուն եւ գուարճութիւններուն. և ըսաւ նկարիչը ժպտուն:

Եւ ծայր տուաւ խօսակցութիւն մը, որ ալ անընդհատ շարունակուեցաւ ամբողջ ճանապարհին իրիկուան կամացնկամաց թանձրացող մթութեան մէջէն:

Միքէն էր գլխատրապէս խօսքը վարողը. կպատմէր մեր որսերէն գանազան մանրամասնութիւններ եւ կպատմէր համով: կատակեց ու նկարագրեց իմ որսորդական ձախլիկութիւններս. եւ պարոն նկարիչը ամբողջ կրծքովը կխնդար:

Եւ Վարդուհին ալ: Եղբօրը ընէն միշտ անբաժան կկատակէր, կծիծաղէր իր սովորական եղանակով: Ինձի ալ հարցումներ կուղղէր, շատ չեզոք տրամադրութեամբ մը. կարծես երկրորդ անգամ կտեսնուէինք:

«Եւներ են». կրկնեցի նորէն մտքիս մէջէն, բայց զգացի, որ փոքրիկ վախ մը մտեր էր հոգիս:

Քիչ մը վերջը Միքէն հրաժեշտ կտանէր, որ ետ դառնայ տուն: Նկատեցի, որ Վարդուհին խնդալով մէկկերկու վայրկեան ձեռքը բռնած սկսաւ խօսիլ խենթ բանի մը վրայ: Արդէն ամբողջ վերի խօսակցութեան միջոցին շարունակ Միքէի հետ էր իր խօսքերով, իր ուշադրութեամբ ու իր աչքերով:

Անհաճոյ զգացում մը խայթեց սիրտս:

Չսպուած անհամբերութեամբ իրենց տունը հասնելնուս կսպասէի, որ մինակ մնանք. մեր առած իրաքանչիւր քայլը դար մը կտեսէր: վերջապէս հասանք եւ եղբարյը սովորականին պէս շիտակ բարձրացաւ ու գնաց ներս: Կատեան ալ վազեց մայրը գտնելու:

Ես ու Վարդուհին մնացինք մինակ. մութ էր արդէն. հագիւ կշնչէի ու կսպասէի, թէ ի՞նչ պիտի ըսէ:

- Գիշե՛ր բարի, պարո՛ն Երուանդ. և ըսաւ Վարդուհին կատարեալ պարզութեամբ եւ սկսաւ սանդուղներէն բարձրանալ:

- Դո՞ւր ալ կերթաք ներս. և թո՞ւ շրթունքներէս:

- Հա՛, իրաւունք ունիք. և բացականչեց, կեցաւ, նայեցաւ ետ սանդուղներուն վրայէն եւ ըսաւ: և սպասեցէ՛ք վայրկեան մը, խնդրեմ. երթամ ձեր «Դաւիթ Բէկը» բերեմ:

- «Դաւիթ Բէ՞կը». ինչո՞ւ համար: և հարցուցի ապշած:

- Կտեսնեմ, որ ձեր ընկերոջ գալէն ետքը ազատ ժամանակ չունիք. եւ չեմ ուզեր ձեզի նեղել կամ խանգարել: Ես խորապէս շնորհակալ եմ ձեզի բոլոր ձեր թափած աշխատանքին համար. եւ կհասկնամ, որ այլեւս պէտք է ընդհատենք:

- Հիմար բաներ կխօսիք. մեր աշխատանքը պիտի շարունակուի. վաղ առտու ճիշտ ժամանակին կուգամ գբադուելու. և ըսի ես իրար ետեւէ հոգիիս խորքէն:

- Ներեցէ՛ք. բայց գրեք էիք, որ առտուները որսի կերթաք:

- Այո՛, ո՛ր մը, երկո՛ւ, ո՛չ հաւիտեան. ալ վերջացա՛ւ. և բացականչեցի ես սաստիկ յուզուած:

- Ա՛խ, այդպէ՛ս. վերջացա՞ւ: դո՛ւք գիտէք. վէպը ձեր տրամարդութեան տակն է. և ըսաւ, վազեց սանդուղներէն վեր ու մութին մէջ աներեւոյթ եղաւ:

Մնացի քարացած սանդուղներու ոտքին: Ես բոլորովին ուրիշ կերպ կերեւակայէի մեր վերստին հանդիպումը. անգուսպ ու խելագար բան մը: Եւ ահա՛ հանկարծ այս պաղ, անտարբեր ու անակրնկալ վերջաբանը:

Միթէ, իրա՞ւ, այս բոլորը միայն կձեւացնէ: Թէ՛ ես եմ հիմար ապուշին մէկը: Ինքս սիրահարեր եմ ու կերեւակայեմ, թէ ան ալ կսիրէ ինձի:

Է՛, խենթ խաղ մըն էր, գուցէ, այնպէս մէկ երկու օր, սիրախաղ մը, որ եկաւ ու անցաւ: Ես եմ, որ այդ ամենուն սկսայ լուրջ վերաբերուիլ: Բայց մի՞թէ այն բոլորը, որ մեր մէջ անցաւ, սովորական բաներ էին, միթէ այ կերպո՞վ կվարուի այդ աղիջկը ամէն տղու հետ:

Ինչո՞ւ ոչ. ահա՛ Միքէն. ինձի հետ ալ նոյն կերպով չսկսա՞ւ. նոյն ձեռքի սեղմումները, նոյն ժպիտները, նոյն կատակներն ու նայուածքները:

Ի՞նչ գոեհիկ տափակութիւն իմ կ'ողմէս, որ այդ հասարակ աշխարհիկ ձեւերը իմ
ագնիւ գգացումներու պատասխանը կածեցի:

Եւ դառն փլուզում մը հոգիիս մէջ կքալէի դէպի տուն:

Աստուա՛ծ իմ, մի՞թէ հնար է, մի՞թէ իրաւ է այս բոլորը: Կխենթենամ: